Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №1-2 (34-35) 2018 Гуманитарные науки

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՁԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԶԲԱՂՄՈՒՆՔ, ՊԱՇՏՈՆ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ՎԵՐՋՆԱԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԲԱՌԵՐՈՒՄ

ՋՈԼՖԱՅԱՆ Ռ. Պ.
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: rrdzh@mail.ru

Ուսումնասիրության նպատակն է սահմանազատել երկարժեք ձևույթների երկու եզրերի բառակազմական գործառույթները՝ սահմանելով մասնագիտություն, զբաղմունք, պաշտոն ցույց տվող հնչյունախմբերի հիմնական/արմատ/ և երկրորդական բառակազմական /ածանց/ արժեքների տարբերակման սկզբունքները:

Բանալի բառեր. *հիմնական ձևույթ, երկրորդական ձևույթ, արմատ, ածանց, հնչյունախումբ, բառակազմական արժեք, երկարժեք ձևույթ, բառային իմաստ, ածանցային նշանակություն, մասնագիտություն, զբաղմունք, պաշտոն*

Ներկայացված է խմբագրություն 04.05.2018

Ժամանակակից հայերենում բաղադրյալ կազմություն ունեցող մի շարք բառերում հանդիպում են մասնագիտություն, զբաղմունք, պաշտոն ցույց տվող հնչյունախմբեր (վերջնաձևույթներ), որոնք տարբեր լեզվաբանների կողմից դիտարկվում են մի դեպքում՝ որպես հիմնական ձևույթ՝ արմատ, մի այլ դեպքում՝ որպես երկրորդական բառակազմական ձևույթ՝ ածանց: Նման հակասական մոտեցումները թույլ չեն տալիս համակարգված ներկայացնել վերոնշյալ հնչյունախմբերի բառակազմական արժեքները և դժվարություններ են ստեղծում բառակազմության դասընթացում հիմնական և երկրորդական բառակազմական ձևույթները դասավանդելու, երկարժեք ձևույթները դասակարգելու հարցում:

Ներկայացվում են ժամանակակից հայոց լեզվի բառակազմության այս հարցի շուրջ եղած տեսակետները, պատճառաբանել մեր մոտեցումը՝ օգնելով ուսանողին և ուսուցչին ճիշտ կողմնորոշվելու մասնագիտություն, զբաղմունք, պաշտոն ցույց տվող մի շարք վերջնաձևույթների բառակազմական արժեքները որոշելիս:

Աղյուսակ 1.

Մասնագիտություն, զբաղմունք, պաշտոն ցույց տվող ձևույթներ

-բան	ակնա*բան*, բուսա*բան*, երկրա*բան*, թվա*բան*
-գետ	լեզվա*գետ*, հայա*գետ*, մատենա*գետ*
-կալ	ծովա*կալ*, կուսա*կալ*
-հար	ջութակա*հար*, շեփորա*հար*, սրնգա*հար*, թմբկա*հար*
-պահ	գանձա*պահ*, մեղվա*պահ*, հաշվա*պահ*
- վար	դաս*վար*, մեքենա*վար*, հաղորդա*վար*, գործա*վար*

Աղյուսակ 2.
Մասնագիտություն, զբաղմունք, պաշտոն ցույց տվող ձևույթներ

-ակ	խոսն*ակ*, բուժ*ակ*, պատվիր*ակ*, սուզ*ակ*, պահ*ակ*
-ական	խորհրդ*ական*, գիտն*ական*, հոգևոր*ական*
-արար	հավաք*արար*, ներկ*արար*, գործ*արար*, շին*արար*
-գործ	ժամա*գործ*, գինե*գործ*, թիթեղա*գործ*, կավա*գործ*
-իչ	մարզ*իչ*, նկար*իչ*, քնն*իչ*, հսկ*իչ*, ցր*իչ*, սափր*իչ*
-ող	լրագր*ող*, զոդ*ող*, վաճառ*ող*, հորատ*ող*, մեքենագր*ող*
-որդ	լող*որդ*, վար*որդ*, ուղեկց*որդ*, հեծանվ*որդ*, միջն*որդ*
-պան	ախոռա*պան*, այգե*պան*, դռնա*պան*, խանութ*պան*
-(ա)վոր	արհեստ*ավոր*, բան*վոր*, կթ*վոր*, հնձ*վոր*, դատ*ավոր*
-ու	թոշակառ*ու*, խուզարկ*ու*, վաշխառ*ու*, վերակաց*ու*

Այս շարքերից միանգամից կարող ենք առանձնացնել *-ակ, -ական, -իչ, -ող, -որդ, -պան, -(ա)վոր, -ու* հնչյունն ու հնչյունախմբերը, որոնք ածանցներ են, քանի որ չունենալով ինքնուրույն, անկախ գործածություն՝ ոչ թե կոնկրետ նյութական, այլ ընդհանուր վերացական իմաստ են արտահայտում և ավելանալով հիմնական ձևույթներին՝ արմատներին կամ բառերին վերջից՝ կազմում են նոր բառեր «մի բան անողի, ինչ-որ պաշտոն, մասնագիտություն ունեցողի» իմաստով:

Ինչ վերաբերում է *-արար, -բան, -գետ, -գործ, –կալ, -հար,-պահ, -վար* ձևույթներին, ապա սրանցից *գետ* –ը, *պահ*-ը և *վար*-ը, անտարակույս, արմատներ են, քանի որ ունեն անկախ, ինքնուրույն գործածություն, նյութական իմաստն են արտահայտում և կազմելով բարդություններ՝ չեն փոխում իրենց բառային, այս դեպքում նաև բայա-հիմքի (գործողության) իմաստը: Համեմատենք.

գետ - լեզվա*գետ*, հայա*գետ*, մատենա*գետ* ←→*գիտակ, գիտուն*- ակնառու է « գիտեցող, իմացող» իմաստը,

պահ - գանձա*պահ*, մեղվա*պահ*, հաշվա*պահ* ←→ *պահակ* - ակնառու է « պահող» իմաստը,

վար - մեքենա*վար*, հաղորդա*վար*, գործա*վար* ←→*վարիչ, վարորդ*– ակնառու է «վարող» իմաստը:

Կասկած չի հարուցում նաև - *արար* ձևույթը՝ որպես ածանց: Ըստ Ս. Գալստյանի՝ *արար* -ը գործողի անվան նշանակությամբ ամենագործուն ածանցներից մեկն է, և այս կաղապարով կազմվում են գոյականներ, որոնք գերազանցապես ունեն «նախատիպի ցույց տված առարկայով՝ որպես մասնագիտությամբ կամ մշտական զբաղմունքով զբաղվող անձ» բառակազմական նշանակությունը, ինչպես՝ *կոշկարար, կազմարար, գյուտարար, փորձարար* և այլն, և ածականներ՝ «նախատիպ բայի ցույց տված հատկանիշն ունեցող, նրանով մշտապես զբաղվող անձ» բառակազմական նշանակությունը, ինպես՝ *խռովարար, հաշտարար, փրկարար, շինարար* [1, էջ 113-114]:

Գ. Ջահուկյանը վերջածանց է համարում *արար*-ը՝ որպես օրինակ բերելով *հավաքարար, փրկարար բառերը* [2, էջ 180], իսկ «Ժամանակակից հայերենի վերջածանցները » ենթավերնագրի ներքո թվարկելով վերջածանցները՝ առանձնացնում է - *արար*-ի հետևյալ կիրառությունները.

ա) *արդյունարար, գործարար, կազմարար* և այլն,

բ) *բարերար, խռովարար, կեղծարար, հուշարար, նորարար* և այլն,

գ) *կործանարար, կռվարար, հավաքարար, հուշարար, փրկարար* և այլն [2, էջ 306]:

Այժմ անդրադառնանք *-բան, -գործ, -կալ, -հար* վերջնաձևույթներին, որոնց ածանց թե արմատ լինելու հարցը հայ լեզվաբանության մեջ տարակերպ է մեկնաբանվում և միշտ չէ, որ ճիշտ են որոշվում ածանցների՝ իբրև բառակազմական-բառաստեղծական, և արմատների՝ իբրև հիմնական ձևույթների, սահմանները:

ԲԱՆ - Ա. Մարգարյանը գրում է. «(Ա)*բան*, (ա)*կալ* … սրանք չեն զրկվել իրենց բուն արմատական իմաստից և առանձնաբար անգամ իբրև նյութական իմաստ ունեցող լեզվական միավոր են ըմբռնվում»: «…Բան բառն, օրինակ, որ բալ «ասել, խոսել» բայի մի հին ձևն է, մի շարք բաղադրություններում գործածվելով որպես վերջին բաղադրիչ՝ «իմացող, գիտցվող» նշանակությունն է արտահայտում և այդ նշանակությամբ էլ ոչ թե ածանցավոր, այլ իսկական բարդություններ է կազմում, ինչպես՝ երկրաբան– геолог, հնէաբան- палеонтолог, հնէաբան– археолог, կենսաբան– биолог, սրտաբան- кардеолог, հանքաբան- минералог, ստուգաբան- этимолог, այլն՝ լեզվաբան, իրավաբան և այլն» [3, էջ 190]:

Ս. Գալստյանը այս ձևույթի մասին այլ կարծիք է հայտնում՝ գրելով. « … (Ա)բան ածանցը կազմում է գոյականներ «նախատիպի ցույց տված առարկայի ուսումնասիրությամբ զբաղվող գիտության ճյուղի մասնագետ» բառակազմական նշանակությամբ , ինչպես՝ *արվեստաբան, ակնաբան, բուսաբան*, եգիպտաբան, հունաբան [1, էջ 48]:

«…*Բան* արմատի բառային նշանակությունը որպես բաղադրության երկրորդ եզր գործածվելիս մթագնում է. *բան* երկրորդ բաղադրիչով բազմաթիվ բարդ բառեր ընկալվում են որպես ածանցավոր կազմություններ: (Ա) բան ածանցը դրվում է հիմնականում բաղաձայնահանգ հիմքերի վրա՝ *ա* հոդակապի պարտադիր գործածությամբ» [1, էջ 48]:

Հենվելով այն մտքի վրա, որ ածանցներ չեն կարող համարվել իրենց բուն բայական իմաստը պահպանած ձևույթները՝ կարծում ենք՝ Ս. Գալստյանն իրավացի է՝ վերոնշյալ կազմություններում *բան* ձևույթն ածանց համարելով, քանի որ *երկրաբան*, *լեզվաբան*, *հնէաբան* , *սրտաբան* բառերում *բան*-ը չի նշանակում. «1. աշխատանք կատարող, աշխատող, գործով զբաղվող » [1,էջ168], այլ նշանակում է գիտության տվյալ բնագավառն ուսումնասիրող մասնագետ:

ԳՈՐԾ - Ա. Մարգարյանը գրում է, որ «*գործ, հար*… ձևույթները, մի շարք բաղադրություններում իրենց արմատական բայահիմքի իմաստից զրկվելով, իբրև ածանց են գործածվում, ինչպես՝ գինեգործ, այգեգործ…ջութակահար, սրնգահար…» [3, էջ 190]:

Այս ձևույթի ածանցային արժեքի մասին խոսում է նաև Ս. Գալստյանը՝ նշելով, որ –(ա)*գործ* ձևույթը՝ որպես ածանց, իր նախատիպի ցույց տված առարկայի «դրանով զբաղվող, այն մշակող, դրա գործն անող մասնագետ» նշանակությունն ունի և հոմանշային հարաբերության մեջ է մտնում նույն իմաստն ունեցող -*արար*, -*իչ*, -*որդ*, -*պան* ածանցների հետ [1, էջ 264]:

Կարծում ենք, որ «*գործ*» արմատից առաջացած ածանցը շարունակում է կապված մնալ իր սերող ձևերի հետ՝ նշանակելով աշխատանք, 2. մասնագիտություն, արհեստ, զբաղմունք, աշխատանքի բնագավառ, 3. գործելը, գործունեություն, 4. պաշտոն, ծառայություն [4, 430],և «ժամագործ», «հացագործ», «արծաթագործ» և մասնագիտություն ցույց տվող նման կազմություններում միջին տեղ է գրավում արմատի և ածանցի միջև, ուստի ճիշտ է այն անվանել ածանցակերպ:

ՀԱՐ, ԿԱԼ - Խոսելով կաղապարային բառադրիչի իրացումների մասին՝ Գ. Ջահուկյանը ածանցներ է համարում բառավերջում *հար-ը* դաշնակահար, ջութակահար և *կալ* –ը՝ ծովակալ, կուսակալ բառերում [2, էջ 187]:

Երաժշտական գործիքի անվանում + «հար» բայահիմք կաղապարն ունի «այդ գործիքը նվագող երաժիշտ » նշանակությունը, այսինքն՝ կորցրել է իր բուն բայական իմաստը՝ «հարվածել, խփել» [5, էջ 844], ուստի և «նեղ մասնագիտությամբ երաժիշտ» անվանող բառերում պետք է համարել ածանց:

Ծովա*կալ*, կուսա*կալ բառերում -կալ* բաղադրիչն չունի «բռնելու գործողության», «կալուլ, կալնուլ» իմաստը, ուստի չի գործածվում իր բուն բայական նշանակությամբ: Ծովա*կալ* բառում «կալ» բաղադրիչն ունի «ռազմածովային նավատորմի բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական կոչում և այդ կոչումը կրող անձ»-ի իմաստ [6, էջ 657], իսկ կուսակալ բառում՝ «1. նահանգի կառավարիչ, նահանգապետ, 2. իշխանության բարձրագույն ներկայացուցիչն ու կառավարիչը ծայրագավառներում, փոխարքա, 3. ծայրագավառների կառավարիչ հին Հայաստանում» իմաստը[4, էջ 784]: Ինչպես տեսնում ենք, *-կալ* ձևույթը, զրկվելով «կալել, բռնել» գործողության իմաստից, բառավերջում կարող է ստանալ պաշտոնի ընդհանուր նշանակություն և ածանցային կիրառություն:

Այսպիսով, պետք է նշել , որ մի շարք ածանցների առաջացման համար հիմք են ծառայել բառարմատները, որոնք լեզվի պատմական զարգացման ընթացքում բառիմաստի մթագնման արդյունքում որոշ բաղադրյալ կազմություններում մթագնել են իրենց բուն արմատական իմաստը և վերացական ընդհանրական նշանակություն ստանալով, այսինքն՝ իմաստափոխվելով՝ վերածվել են ածանցների: Այս դեպքում մենք գործ ունենք բազմագործառույթ ձևույթների, այն է՝ ձևով նույն, սակայն տարբեր գործառույթներ կատարող հնչյունախմբերի՝ արմատի կամ ածանցի հետ:

Կարծում ենք՝ *-արար, -բան, -գործ, -կալ, -հար* ձևույթները, հանդես գալով բառավերջում և նշանակելով մասնագիտություն, զբաղմունք, պաշտոն՝ զրկվում են իրենց բուն բառային իմաստից և գործածվում որպես վերջածանց: Մինչդեռ *վերջաբան, առաջաբան, ասեղնագործ, ձեռագործ, ուղեկալ, բաժակակալ, ծնկահար, դաշունահար* բառերում վերոնշյալ բաղադրիչները պահպանում են իրենց բուն բառային իմաստները, ուստի և արմատներ են:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ եզրակացնում ենք, որ մասնագիտություն, զբաղմունք, պաշտոն ցույց տվող մի շարք վերջնաձևույթների բառակազմական արժեքները որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ հայերենում կան երկարժեք ձևույթներ, որոնց հիմնական՝ արմատ, թե երկրորդական բառակազմական՝ ածանց լինելու հանգամանքը որոշվում է ըստ այն մոտեցման, թե հայտնվելով բառավերջում և մասնակցելով նոր բառերի կազմությանը՝ սրանք պահպանու՞մ են իրենց բառային իմաստը, թե՞ ձեռք են բերում նոր՝ ածանցային նշանակություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջեր 48, 113-114,264 :
2. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն ,Երևան, 1989, էջեր 180, 187, 306:
3. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Երևան, 1990, էջ 190:
4. Ժամանակակից հայերենի բացատրական բառարան, Հատոր 1, Երևան, 1969, էջեր 168, 430, 784:
5. Ժամանակակից հայերենի բացատրական բառարան, Հատոր 3, Երևան, 1974, էջ 844:
6. Ժամանակակից հայերենի բացատրական բառարան,Հատոր 2, Երևան, 1972, էջ 657:

РЕЗЮМЕ

РАЗЛИЧИЕ ОСНОВНЫХ И ВТОРИЧНЫХ МОРФЕМ В СЛОВАХ, ОБОЗНАЧАЮЩИХ ПРОФЕССИЮ, ЗАНЯТИЕ, ДОЛЖНОСТЬ

ДЖУЛФАЯН Р.П.

В работе исследованы словообразовательные элементы, которые обозначают профессию, занятие, должности.

Следует иметь в виду, что указанные составляющие элементы являются как отдельными корнями, так и суффиксами, которые образовались в течение исторического развития языка от соответствующих корней.

SUMMARY

On WORD-FINAL MORPHEMES INDICATING profession, occupation and position

JULFAYAN R.P.

The composite words in the modern Armenian language feature clusters indicating profession, occupation and position, which can be divided into three categories according to their word-formative value: a – affixes, b – roots, c – multifunctional morphemes, i.e. compositions which can function both as roots and affixes on the level of word formation.

The current study is dedicated to those morphemes, which are interpreted differently in terms of being roots or affixes in the Armenian linguistics, and the boundary between roots and affixes are not always correctly set.